Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-234^{2}-22.12.2017-ՏՏԳԲ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 242-րդ հոդվածի վերանգրում և տեքստում «հսկողություն իրականացնող մարմինները» բառերը փոխարինել «վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 242^{2}-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը» բառերը փոխարինել «վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի փետրվարի 8-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված **Կ-234 -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Կ-234[1] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», Կ-234[2] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», Կ-234[3] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

№	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**«Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**				
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 1-ին կետ	2-րդ հոդվածի 1-ին մասում «ընդերքաօգտագործման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «համար» բառը՝ նկատի ունենալով «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն

2.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
3.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում «տեղակալին»» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերով» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
4.	ՀՀ կառավարություն	11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախատեսվող փոփոխությունները չեն համապատասխանում «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի գործող տեսքին: /Հիշյալ կետում փոփոխություններ են կատարվել 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-270-Ն օրենքով/:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
2. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
			«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության		

			օրենքի նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:		
3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	2-րդ հոդվածում «տեքստում» բառից հետո «վերահսկողություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «հսկողություն» բառով՝ նկատի ունենալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 ^{2}–րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 ^{2}–րդ հոդվածի տեքստում ամրագրված է «վերահսկողություն» բառը	
4. «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն